ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 01-2025-Ա/Ս

ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 22 հոկտեմբեր 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ավետիս Առաքելյանի նկատմամբ 2025 թվականի հուլիսի 25-ին այլ սահմանափակման խախտման առերևույթ դեպքի վերաբերյալ հարուցված N 01-2025-Ա/Ս վարույթի նյութերը.

Պարզեց

1. Նախապատմություն

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 27-րդ հոդվածով, «Armtimes» լրատվականի՝ «Վարդան Ղուկասյանի փեսան և ընկերն ընտրվեցին Գյումրու առաջին և երկրորդ փոխքաղաքապետ. ՔՊ-ն ձեռնպահ է քվեարկել» վերտառությամբ հրապարակման (այսուհետ՝ Հրապարակում) հիման վրա իրականացված ուսումնասիրության հիման վրա 2025 թվականի հուլիսի 25-ին

կայացրել է Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ավետիս Առաքելյանի այլ սահմանափակման խախտման առերևույթ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու մասին N 01-2025-Ա/Ս որոշումը:

1.2 Հրապարակմամբ ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը.

«Ինչպես հայտնել ենք, Գյումրու ավագանին նիստ է գումարել՝ օրակարգում ունենալով 2 փոխքաղաքապետի և մշտական գործող հանձնաժողովների նախագահների ու տեղակալների նշանակումների վերաբերյալ օրակարգային հարցերը:

Փոխքաղաքապետի երկու թեկնածուներն են Ավետիս Առաքելյանը, որ Ղուկասյանի փեսան է, և Գագիկ Մանուկյանը՝ Ղուկասյանի մտերիմ ընկերը, երկուսն էլ ընտրվեցին փոխքաղաքապետի պաշտոններում:

Ղուկասյանի փեսան՝ Ավետիս Առաքելյանը, ընտրվեց Գյումրու քաղաքապետի առաջին տեղակալ: ՔՊ խմբակցությունը, որը կողմ էր քվեարկել հանձնաժողովի նախագահների և տեղակալների թեկնածությանը, ձեռնպահ քվեարկեց փոխքաղաքապետների թեկնածությանը:

Առաքելյանը 17 կողմ ձայնով ընտրվեց:

Փեսայի ընտրվելուց հետո Ղուկասյանը հայտարարել է. «Նրանից ավելի շատ եմ պահանջելու, կապ չունի, որ իմ փեսան է:»:

1.3 2025 թվականի հուլիսի 25-ին վարույթ հարուցելու մասին որոշման օրինակն ուղարկվել է Ավետիս Առաքելյանին և պահանջվել է գրությունն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում վարույթում քննարկվող հարցի առնչությամբ ներկայացնել գրավոր պարզաբանում՝ դրան կցելով փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

1.4 2025 թվականի օգոստոսի 9-ին Ավետիս Առաքելյանն ստացել է որոշումը, և 2025 թվականի օգոստոսի 20-ին Հանձնաժողովում մուտքագրվել է նրա լիազոր ներկայացուցչի գրավոր պարզաբանումը:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը և պարզաբանումը

Ավետիս Առաքելյանի ներկայացուցիչ Առնոլդ Վարդանյանը հարուցված վարույթի շրջանակներում՝ 2025 թվականի օգոստոսի 20-ին ներկայացրել է պարզաբանումներ (այսուհետ՝ Պարզաբանում), որով մասնավորապես հայտնել է, որ՝

«**(...) Բ) Մեջբերված իրավունքի և չափորոշիչների կիրառումը սույն գործով.**

24. Սույն գրավոր պարզաբանումներում ստորև կներկայացվեն հիմնավորումներ այն մասին, որ 2025 թվականի հուլիսի 25-ի այլ սահմանափակման խախտման առերևույթ դեպքի վերաբերյալ Ավետիս Առաքելյանի նկատմամբ հարուցված թիվ 01-2025 Ա/Ս վարույթի շրջանակներում սահմանափակումների խախտման առնչությամբ թե՛ օրենսդրական, թե՛ բովանդակային իմաստով բացակայում է սահմանափակումների խախտման իրավիճակը: Ուստի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պետք է կայացնի եզրակացություն՝ այդպիսի խախտման բացակայության վերաբերյալ: Ըստ այդմ՝ ստորև ներկայացվող հիմնավորումները կշարադրվեն ըստ հետևյալ հաջորդականության.

- Սահմանափակումների խախտման առկայությունը՝ օրենսդրական և բովանդակային (ratione materia) պահանջների առումով,

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վարույթի հարուցման ժամկետների (ratione temporis) պահպանումը՝ բարձրացվող հարցի իրավական արժեքի առումով:

i. Սահմանափակումների խախտման առկայությունը՝ օրենսդրական և բովանդակային (ratione materia) պահանջների առումով.

25. Սույն վարույթի շրջանակներում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առջև բարձրացվող առաջին իրավական հարցը հետևյալն է. Արդյո՞ք սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում առկա է սահմանափակումների խախտման այնպիսի իրավիճակ, որն օրենսդրական և բովանդակային իմաստով համարվում է այդպիսին՝ «Հանրային ծառայության մասին»

ՀՀ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների համատեքստում, այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը համարվում է քաղաքական պաշտոն, ի պաշտոնե լինելով ավագանու անդամ չի ստեղծում դասական ենթակայական հարաբերություններ համայնքի ղեկավարի հետ, խնամիական հարաբերությունների առկայությունը նախապես եղել է հայտարարված, համայնքի ղեկավարի տեղակալն ընտրվել է ժողովրդավարական ընտրությունների անցկացման արդյունքում և նրա նշանակման անհրաժեշտությունը բխել է հանրային շահի պաշտպանությունից:

26. Ինչպես կարելի է նկատել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, հանրային ծառայողների նկատմամբ նախատեսվող սահմանափակումներն ուղղված են հանրային ծառայողների պատշաճ վարքագծի ապահովմանը, շահերի բախման հնարավոր իրավիճակների առաջացման կանխարգելմանը, որոնք ազդում են կամ կարող են ազդել պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Միաժամանակ, կարևոր է նկատի ունենալ, որ թեև նշված սահմանափակումներն ունեն օբյեկտիվ հիմք և հետապնդում են իրավաչափ նպատակ, սակայն դրանք դասական իմաստով կարող են կիրառելի չլինել քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ՝ պայմանավորված այդ պաշտոնատար անձանց ընտրության առանձնահատկություններով: Այդպիսի առանձնահատկությունների անտեսումը կարող է խաթարել քաղաքական իշխանության բնականոն գործունեությունը: Թերևս, դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն իրավական հետևանքների առումով բացառություններ է նախատեսում քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց համար:

27. Այդ պատճառով էլ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված սահմանափակումների հնարավոր խախտումները պետք է անհատականացված ուսումնասիրության ենթարկվեն՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանք արդյունք են եղել որոշակի անձի կամ անձանց մասնավոր լիազորությունների չարաշահման, ուղղված են եղել որոշակի արտոնություններ

ձեռքբերելուն կամ այլ չարամիտ նպատակ են հետապնդել, և ի՞նչ իրավական հետևանքներ են առաջացրել:

28. Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Քաղաքական կառույցի՝ ՀՀ կոմունիստական կուսակցության լիազոր ներկայացուցչի կողմից 2025 թվականի մարտի 1-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել կուսակցության կողմից հաստատված ընտրական ցուցակ, **որի առաջին տեղում՝ որպես Գյումրի համայնքի ղեկավարի թեկնածու ներկայացված է եղել Վարդան Կոլյայի Ղուկասյանը, իսկ երկրորդ տեղում՝ որպես Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու՝ Ավետիս Գուրգենի Առաքելյանը:**

- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակված տվյալների համաձայն՝ 2025 թվականի մարտի 10-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ **ըստ ՀՀ կոմունիստական կուսակցության կողմից ներկայացված հերթականության՝** համայնքի ղեկավարի, ղեկավարի առաջին տեղակալի և մյուս տեղակալների, ավագանու անդամների թեկնածուները գրանցվել են:

- 2025 թվականի մարտի 31-ի հրապարակային մամուլի ասուլիսի ընթացքում Գյումրիի համայնքի ղեկավարի թեկնածու Վարդան Ղուկասյանը հայտնել է, որ եթե իրեն ձերբակալեն, փոխքաղաքապետը կդառնա քաղաքապետ: Նա ընդգծել է, որ ինքը վախենալու բան չունի, բայց եթե քայլեր ձեռնարկվեն այդ ուղղությամբ, փոխքաղաքապետն ունի կարևոր առաքելություն:

- 2025 թվականի ապրիլի 4-ին Վարդան Ղուկասյանը «Aravot.am»-ի հետ զրույցում հրապարակել է, որ Գյումրու առաջին փոխքաղաքապետի թեկնածու է ներկայացնելու Ավետիս Առաքելյանին:

- Գյումրի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 2-ի նիստի ժամանակ Վարդան Ղուկասյանը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ

օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, Ավետիս Առաքելյանին ներկայացրել է որպես Գյումրու համայնքապետի առաջին տեղակալի թեկնածու:

- Նույն օրը՝ 2025 թվականի մայիսի 2-ին, Գյումրիի համայնքի ավագանու նիստի ժամանակ 17 կողմ, 13 դեմ ձայներով Ավետիս Առաքելյանն ընտրվել է Գյումրու համայնքապետի առաջին տեղակալ:

- Ավետիս Առաքելյանը 2025 թվականի մայիսի 23-ին ներկայացված՝ պաշտոնը ստանձնելու հայտարարագրում նշել է, որ հանդիսանում է Վարդան Ղուկասյանի դստեր՝ Աննա Ղուկասյանի ամուսինը:

29. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում, նախ և առաջ պետք է արձանագրել, որ ինչպես համայնքի ղեկավարի, այնպես էլ համայնքի ղեկավարի տեղակալների պաշտոնները **քաղաքական են և ի սկզբանե ընտրվում են քաղաքական կուսակցության առաջադրմամբ՝ հանրության կողմից տեղական ինքնակառավարման մարմինը ձևավորելու միջոցով, ինչն ունի էական նշանակություն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված վարույթի շրջանակներում:** Տվյալ պարագայում, Ավետիս Առաքելյանն ի սկզբանե Կոմունիստական կուսակցության կողմից ներկայացվել է որպես քաղաքապետի առաջին տեղակալի թեկնածու՝ կուսակցության կողմից իրեն ներառելով ընտրացուցակի երկրորդ հորիզոնականում՝ կից ներկայացնելով նաև համապատասխան ձևաչափով լրացված հայտարարագիր: Այսինքն՝ ի սկզբանե՝ դեռևս 2025 թվականի մարտի 1-ի ներկայացված փաստաթղթերով և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 10-ի գրանցման հաստատմամբ **Ավետիս Առաքելյանը հանդես է եկել և մասնակցել է ընտրություններին որպես Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու:** Այլ կերպ, ընտրական իրավունք ունեցող հանրության կողմից Ավետիս Առաքելյանը ողջ ընտրապայքարի շրջանակներում ընկալվել է որպես Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու և ստացել հանրային աջակցություն: **Հետևապես, նման պայմաններում համայնքի ղեկավարի կողմից քաղաքական կուսակցության կողմից որպես համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածու առաջադրված անձին չներկայացնելը համայնքի ավագանու քննարկմանը, հանգեցնելու էր ծանր հետևանքների՝**

ժողովրդավարական ընտրությունների ձևով տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման հիմքում ընկած արժեքների, սկզբունքների, հանրությունից ստացված վստահության արժեզրկմանը: Այդ պատճառով էլ գոյություն չի ունեցել որևէ այլ գործիքակազմ, քան հրապարակային հայտարարելն առկա կապի մասին և ընտրացուցակի երկրորդ հորիզոնականում զբաղեցնելու ուժով Ավետիս Առաքելյանի թեկնածությունը հանրությունից առաջնային մանդատ ունեցող համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելը, ինչն էլ իրազեկված լինելով այդ կապի մասին այն համարել է հաղթահարված և նշանակել է իրեն որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալ ավագանու անդրանիկ՝ 2025 թվականի մայիսի 2-ի նիստում:

30. Նման պայմաններում, ստացվում է, որ Կոմունիստական կուսակցության կողմից ընտրություններում հանրության վստահության անհրաժեշտ քանակի ձայներ հավաքելու և այլ քաղաքական կուսակցությունների հետ ձեռքբերված համաձայնության արդյունքում Գյումրի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 2-ի նիստի ժամանակ՝ Ավետիս Առաքելյանին՝ որպես Գյումրու համայնքապետի առաջին տեղակալի թեկնածու ներկայացվել է ելնելով կուսակցության կողմից կազմված և ներկայացված ընտրացուցակում ներառված թեկնածուների հաջորդականության տրամաբանությունից: **Այդպիսի մոտեցումը պայմանավորված է եղել նաև հանրային վստահությանը հետևողական լինելու անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով, որ Ավետիս Առաքելյանը հանրությունից վստահության քվե է ստացել ընկալվելով որպես Գյումրու համայնքապետի առաջին տեղակալի թեկնածու: Հետևաբար, այս հանգամանքներում Ավետիս Առաքելյանի ընտրությունը ոչ թե պայմանավորված է եղել խնամիական-մասնավոր հարաբերություններով, այլ ուղղակիորեն բխել է տեղական ինքնակառավարման մարմնի ձևավորման սահմանադրական ընթացակարգից՝ պայմանավորված Գյումրիում անցկացված ժողովրդավարական ընտրությունների արդյունքներով:**

31. Ավելին, կարևոր է նաև նկատի ունենալ, որ Ավետիս Առաքելյանը նշանակվել է համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում **հանրության առաջնային մանդատ ունեցող մարմնի՝ համայնքի ավագանու կողմից՝ տեղեկացված լինելով**

այն մասին, որ Ավետիս Առաքելյանը հանդիսանում է Վարդան Ղուկասյանի փեսան:

32. Բացի այդ, այն ինչն ունի առավել առանցքային նշանակություն, կարևոր է նկատի ունենալ, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համատեքստում Ավետիս Առաքելյանի նշանակումը՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում որևէ կերպ ուղղված չի եղել նրա որևէ անձնական-մասնավոր շահերի սպասարկմանը՝ հաշվի առնելով նաև այն, որ ինչպես համայնքի ղեկավարը, այնպես էլ համայնքի ղեկավարի առաջին տեղակալն ուղղակիորեն հաշվետու են համայնքի ավագանուն: Այլ կերպ, նրանք վերահսկողական հարաբերությունների մեջ են գտնվում ոչ թե միմյանց, այլ ավագանու հետ: **Այսինքն՝ ի պաշտոնե լինելով ավագանու հավասարազոր իրավական կարգավիճակ ունեցող անդամներ, թե՛ համայնքի ղեկավարը, թե՛ համայնքի ղեկավարի տեղակալը չեն գտնվում դասական իմաստով վերադաս-ստորադաս ենթակայական հարաբերությունների մեջ, դրանք քաղաքական-ներկայացուցչական պաշտոններ են: Ուստի, տվյալ պարագայում, որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակվելով, Ավետիս Առաքելյանը չի ստացել որևէ արտոնություն, գույքային կամ այլ վիճակի բարելավում բովանդակային ցանկացած իմաստով: Հետևաբար, տվյալ պարագայում չի կարելի իրավիճակն ուսումնասիրության առարկա դարձնել ֆորմալիստական (ձևական) նկատառումներով, այլ անհրաժեշտ է պարզել խնդրո առարկա սահմանափակման անմիջական կիրառելիությունը տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքում ձևավորվող ավագանու անդամների նկատմամբ: Լինելով ներկայացուցչական պաշտոն՝ թե՛ համայնքի ղեկավարի, թե՛ տեղակալի վարձատրության, հավելավճարի և այլ բոլոր հարցերի լուծումները կախված են առաջնային մանդատ ունեցող ավագանու կողմից կայացվող որոշումներից:**

33. Ավելին, Ավետիս Առաքելյանին երկրորդ հորիզոնականում՝ որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու առաջադրելը, միջազգային չափորոշիչներում առաջ քաշվող՝ հանրային շահի պաշտպանության ապահովման անհրաժեշտության համատեքստում, ունեցել է որոշակի պատճառաբանություն և մշտապես ներկայացվել մամուլի ներկայացուցիչներին: Նախ և առաջ, այդ

հորիզոնականներն ունեն իրավական նշանակություն և նույնիսկ ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի իմաստով ներկայացնում են քաղաքական կուսակցության կողմից ձևավորվող քաղաքային համայնքը կառավարող ղեկավար կազմը, ինչը նաև ժամանակին հաստատվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Բացի այդ, 2024 թվականի ավարտին հայտարարելով, որ առաջադրվելու է որպես համայնքի ղեկավարի թեկնածու, 2025 թվականի սկզբում Վարդան Ղուկասյանը ձերբակալվեց, այնուհետև՝ ազատ արձակվեց ապօրինի զենք-զինամթերք կրելու կասկածանքով: Թեև հետագայում ձերբակալումը ճանաչվեց ոչ իրավաչափ, սակայն Վարդան Ղուկասյանի կողմից մշտապես, այդ թվում՝ որպես Գյումրիի համայնքի ղեկավարի թեկնածու, հայտարարվել է, որ քաղաքական նկատառումներից ելնելով ինքը կարող է ձերբակալվել՝ հաշվի առնելով նաև ընտրությունների նախաշեմին Վարդան Ղուկասյանի նկատմամբ՝ նախաձեռնված քրեական վարույթը, ինչի պարագայում քաղաքը ղեկավարող միակ անձը դառնալու է քաղաքապետի առաջին տեղակալը: Նման պայմաններում է, որ քաղաքային կառավարման կայունությունն ապահովելու, տեղական ինքնակառավարման մարմնում անցկացված ժողովրդավարական ընտրության արդյունքներին հետամուտ լինելու, քաղաքի պատշաճ կառավարումն ապահովելու, հանրային շահը պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով այդ աստիճան կարևորվել է քաղաքապետի առաջին տեղակալի պաշտոնը: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հենց այդ պատճառով նաև Հայաստանի մի շարք համայնքներում, այդ թվում՝ Վանաձորում, կառավարման երկարատև ճգնաժամ էր առաջացել տեղական ինքնակառավարման մարմնում և ամիսներ շարունակ համայնքը՝ հնարավոր չէր լինում ապահովել քաղաքի կառավարումն ու ընթացիկ խնդիրների լուծումը: Այսինքն՝ այս առումով՝ քաղաքական կուսակցության կողմից Ավետիս Առաքելյանին որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու առաջադրելն ուղղված է եղել ցանկացած հանգամանքների առաջացման պայմաններում հանրային շահի՝ Գյումրի համայնքում կառավարման պատշաճ իրականացման ապահովմանը, ինչը ևս չի կարող անտեսվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կիրառելիության հարցը որոշելիս:

34. Մյուս կողմից կարևոր է նաև այն հանգամանքը, որ Վարդան Ղուկասյանի և Ավետիս Առաքելյանի միջև ոչ արյունակցական բնույթի կապի առկայությունը երբևէ չի թաքցվել, ավելին՝ այն պաշտոնապես հայտարարվել է ինչպես մինչև ավագանու նիստի անցկացումը, այնպես էլ դրանից հետո, բացի այդ՝ հայտարարագրվել է՝ հնարավորություն ընձեռելով համայնքի ավագանուն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին խոշորացույցի ներքո վերահսկել այն: Այսինքն՝ տվյալ պարագայում նշված անձինք գործել են բարեխղճորեն, հնարավորություն ընձեռելով իրավասու մարմիններին խոշորացույցի ներքո անընդմեջ վերահսկել իրենց պաշտոնական պարտականությունների կատարման պատշաճությունը:

35. **Կարևոր է նաև ընդգծել, համայնքի ավագանու կողմից Ավետիս Առաքելյանին համայնքի ղեկավարի առաջին տեղակալի ներկայացուցչական-քաղաքական բնույթի պաշտոնում առաջնային մանդատ ունեցող և քաղաքական մարմին հանդիսացող ավագանու կողմից նշանակելը չի եղել ուղղակիորեն օրենսդրորեն արգելված: Եթե լիներ այդպիսին, Ավետիս Առաքելյանի թեկնածությունը չէր կարող հաստատվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ընտրացուցակով որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու:** Ավելին, տվյալ պարագայում այն նույնիսկ եղել է արժանիքների վրա հիմնված նշանակում՝ նկատի ունենալով, որ Ավետիս Առաքելյանն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, նախկինում՝ 2016-2021թթ.-ին զբաղեցրել է համայնքի ավագանու անդամի պաշտոնը և ունեցել է փորձառություն համայնքի ավագանիում մասնագիտական գործունեություն ծավալելու առումով:

36. Այս հանգամանքների պայմաններում է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համատեքստում Ավետիս Առաքելյանի նշանակումը համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում չի հանգեցրել իր կամ համայնքի ղեկավարի կողմից իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Այլ կերպ, բացակայում է որևէ փաստական տվյալի վրա հիմնված մտահոգություն առ այն, որ համայնքի ավագանու կողմից Ավետիս Առաքելյանի նշանակումն ունեցել կամ ունենալու է որևէ ազդեցություն իր կամ համայնքի ղեկավարի կողմից իր պաշտոնեական պարտականությունների կատարման վրա: Վերջիվերջո, ինչպես արդեն նշվեց, թե՝ համայնքի ղեկավարը, թե

համայնքի ղեկավարի տեղակալը հավասարազոր քաղաքական ներկայացուցչական պաշտոններ են, հաշվետու համայնքի ավագանուն:

37. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, պետք է եզրահանգել, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում առկա չէ սահմանափակումների խախտման այնպիսի իրավիճակ, որն օրենսդրական և բովանդակային իմաստով՝ համարվում է այդպիսին՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների համատեքստում, այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը համարվում է քաղաքական պաշտոն, ի պաշտոնե լինելով ավագանու անդամ չի ստեղծում դասական ենթակայական հարաբերություններ համայնքի ղեկավարի և տեղակալի միջև, խնամիական հարաբերությունների առկայությունը նախապես եղել է հայտարարված, համայնքի ղեկավարի տեղակալն ընտրվել է ժողովրդավարական ընտրությունների անցկացման արդյունքում և նրա նշանակման անհրաժեշտությունը բխել է հանրային շահի պաշտպանությունից:

ii. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վարույթի հարուցման ժամկետների (ratione temporis) պահպանումը՝ բարձրացվող հարցի իրավական արժեքի առումով.

38. Սույն վարույթի շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առջև բարձրացվող երկրորդ իրավական հարցը հետևյալն է. *Արդյո՞ք նույն գործի փաստական հանգամանքների պայմաններում՝ այլևս իրավական արժեքը չի կորցրել լրատվամիջոցի հրապարակման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից նախաձեռնված վարույթով քննարկվող հարցը, այն պայմաններում, երբ Ավետիս Առաքելյանին «մեղսագրվող» գործողության կամ նույնիսկ առիթ հանդիսացող հրապարակումից հետո անցել է ավելի քան երկու ամիս:*

39. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունից հետևում է, որ ի տարբերություն անձի գրավոր դիմումի, լրատվության միջոցներով կատարվող հրապարակումներով սահմանված չէ դեպքից, խախտման պահից կամ նույնիսկ լրատվության միջոցի կողմից կատարված հրապարակումից հետո վարույթի

հարուցման հարցի քննարկման առավելագույն ժամկետ: Մինչդեռ, ՀՀ օրենսդրության առանձին կարգավորումներով մշտապես սահմանվում են այսպես կոչված վաղեմության ժամկետներ, որի անցնելուց հետո բարձրացվող հարցն այլևս կորցնում է իր իրավական արժեքը և հետաքրքրություն այլևս չի ներկայացնում դրա փաստական հանգամանքները քննարկման առարկա դարձնելու համար:

40. Այդպիսի մոտեցում առկա է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում, որի 37-րդ հոդվածում նույնիսկ վարչական իրավախախտման համար սահմանված է տույժ նշանակելու առավելագույն ժամկետ, որը չի կարող լինել ավելին, քան երկամսյա ժամկետը կատարման օրվանից, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտումների դեպքում՝ բացահայտվելու օրվանից երկամսյա ժամկետում: Թեև սույն վարույթի շրջանակներում նշված նորմն անմիջականորեն կիրառելի չէ, սակայն զուգահեռներ անցկացնելով խնդրո առարկա հարցի հետ, այն ցույց է տալիս այն ընդհանուր տրամաբանությունը, որ վարույթի իրականացումն առարկայազուրկ է դառնում այն պայմաններում, երբ անցնում է որոշակի ժամկետ:

41. Ընդ որում, ուղենշային նշանակություն ունի տվյալ դեպքում խնդրո առարկա երկամսյա ժամկետը՝ նկատի ունենալով, որ եթե տեսական մակարդակում անձի նկատմամբ ենթադրյալ իրավախախտման բացահայտման պահից երկամսյա ժամկետն անցնելուց հետո չի կարող նշանակվել ավելի խիստ իրավական ներգործության միջոց, ապա առավել նվազ միջոցի՝ ենթադրյալ խախտման քննարկման արդյունքում սահմանափակման խախտման դեպքի առկայության կամ բացակայության հարցի քննարկումը, առավել ևս կորցնում է իր հնարավոր իրավական արժեքը:

42. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Քաղաքական կառույցի՝ ՀՀ կոմունիստական կուսակցության լիազոր ներկայացուցչի կողմից 2025 թվականի մարտի 1-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել կուսակցության կողմից հաստատված ընտրական ցուցակ, որի **առաջին տեղում՝ որպես Գյումրի համայնքի ղեկավարի թեկնածու**

ներկայացված է եղել Վարդան Կոլյայի Ղուկասյանը, իսկ երկրորդ տեղում՝ որպես Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու՝ Ավետիս Գուրգենի Առաքելյանը:

- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակված տվյալների համաձայն՝ 2025 թվականի մարտի 10-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ **ըստ ՀՀ կոմունիստական կուսակցության կողմից ներկայացված հերթականության՝** համայնքի ղեկավարի, ղեկավարի առաջին տեղակալի և մյուս տեղակալների, ավագանու անդամների թեկնածուները գրանցվել են:

- 2025 թվականի մարտի 31-ի հրապարակային մամուլի ասուլիսի ընթացքում Գյումրիի համայնքի ղեկավարի թեկնածու Վարդան Ղուկասյանը հայտնել է, որ եթե իրեն ձերբակալեն, փոխքաղաքապետը կդառնա քաղաքապետ: Նա ընդգծել է, որ ինքը վախենալու բան չունի, բայց եթե քայլեր ձեռնարկվեն այդ ուղղությամբ, փոխքաղաքապետն ունի կարևոր առաքելություն:

- 2025 թվականի ապրիլի 4-ին Վարդան Ղուկասյանը «Aravot.am»-ի հետ զրույցում հրապարակել է, որ Գյումրու առաջին փոխքաղաքապետի թեկնածու է ներկայացնելու Ավետիս Առաքելյանին:

- Գյումրի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 2-ի նիստի ժամանակ Վարդան Ղուկասյանը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասով, Ավետիս Առաքելյանին ներկայացրել է որպես Գյումրու համայնքապետի առաջին տեղակալի թեկնածու:

- Նույն օրը՝ 2025 թվականի մայիսի 2-ին, Գյումրիի համայնքի ավագանու նիստի ժամանակ 17 կողմ, 13 դեմ ձայներով Ավետիս Առաքելյանն ընտրվել է Գյումրու համայնքապետի առաջին տեղակալ:

- Ավետիս Առաքելյանը 2025 թվականի մայիսի 23-ին ներկայացված՝ պաշտոնը ստանձնելու հայտարարագրում նշել է, որ հանդիսանում է Վարդան Ղուկասյանի դստեր՝ Աննա Ղուկասյանի ամուսինը:

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 01-2025 Ա/Ս որոշման համաձայն՝ ուսումնասիրության հիմք է հանդիսացել

Հանձնաժողովի Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից **«Armtimes» լրատվականի 2025 թվականի մայիսի 5-ի (իրականում մայիսի 2-ի)՝ «Վարդան Ղուկասյանի փեսան և ընկերն ընտրվեցին Գյումրու առաջին և երկրորդ փոխքաղաքապետ, ՔՊ-ն ձեռնպահ է քվեարկել» վերտառությամբ հրապարակումը:**

43. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքներից հետևում է, որ Ավետիս Առաքելյանը՝ որպես Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու, ներկայացվել է դեռևս 2025 թվականի մարտի 1-ին, գրանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից դեռևս մարտի 10-ին, ինչը հրապարակվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում: Իսկ ապրիլի 4-ից այդ մասին նաև հրապարակային հայտարարվել է մամուլի միջոցով: Ավելին, նույնիսկ հենց կոնկրետ «Armtimes» լրատվականի կողմից, ինչը առիթ է հանդիսացել վարույթի նախաձեռնման համար, հրապարակումը կատարվել է 2025 թվականի մայիսի 2-ին:

44. Սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից լրատվամիջոցի հրապարակման կապակցությամբ վարույթի հարուցման հարցի լուծումը տևել է ավելի քան երկու ամիս, ինչը չի տեղավորվում՝ վարչարարության՝ իրականացման վաղեմության ժամկետների ընդհանուր տրամաբանության մեջ: Կրկին, կարևոր է արձանագրել, որ թեև «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքն, ըստ էության, ունի բաց և չի կարգավորում լրատվության միջոցների հրապարակման հիման վրա ենթադրյալ դեպքից հետո վարույթի հարուցման վաղեմության ժամկետի հարցը, սակայն դա չի նշանակում, որ անձի նկատմամբ էապես երկար, նույնիսկ վարչական պատասխանատվության ենթարկելու երկամսյա ժամկետի ավարտից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարող է վարույթ հարուցել: Ժամկետների բացակայության կամ ողջամիտ ժամկետի անցած լինելու պայմաններում վարույթի հարուցումը նմանվում է այսպես կոչված «Դամոկլեսյան սրի», որը կարող է այդպես անընդմեջ կախված մնալ անձի գլխավերևում՝ Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովի կողմից իր նկատմամբ վարույթի հարուցման և հնարավոր իրավական ներգործության միջոցների կիրառման սպառնալիքով:

45. Նման պայմաններում, նկատի ունենալով, որ սույն գործով վարույթը հարուցվել է սահմանափակման ենթադրյալ խախտման դեպքի մասին պաշտոնապես պետական իշխանության մարմիններին հայտնի դառնալու, պետական և մասնավոր կայքէջերում, նույնիսկ սույն վարույթի առիթ հանդիսացող հրապարակման պահից ավելի քան երկու ամիս անց, պարզ է դառնում, որ խնդրո հարցը կորցրել է իր նշանակությունը: Ուստի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն այլևս իրավասու չէ շարունակելու սույն վարույթի քննարկումը և վարույթը ենթակա է կարճման: Այլ կերպ, անհրաժեշտ է եզրահանգել, որ սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում այլևս իրավական արժեքը կորցրել է լրատվամիջոցի հրապարակման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից նախաձեռնված վարույթով քննարկվող հարցը, այն պայմաններում, երբ Ավետիս Առաքելյանին «մեղսագրվող» գործողության կամ նույնիսկ առիթ հանդիսացող հրապարակումից հետո անցել է ավելի քան երկու ամիս:

V. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ԽՆԴՐԱՄԱՍ.

46. Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի կիրառմամբ՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից գրավոր պարզաբանում ներկայացնելու հնարավորությամբ, Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ավետիս Առաքելյանի անունից լիազորված եմ խնդրելու կայացնել սույն վարույթով եզրակացություն՝

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սահմանափակման խախտման բացակայության մասին՝ օրենսդրական և բովանդակային (ratione materia) չափանիշների ոչ կիրառելիության պատճառով, կամ

- Սահմանափակման խախտման առնչությամբ հարուցված վարույթը կարճելու մասին՝ (ratione temporis) երկամսյա ժամկետն անցած լինելու պայմաններում բարձրացվող հարցի իրավական արժեքը կորցրած լինելու պատճառաբանությամբ:

3. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Գյումրու համայնքապետարանի պաշտոնական կայքէջի համաձայն՝ 2025 թվականի ապրիլի 16-ին համայնքի ավագանու N 2-Ա որոշմամբ Վարդան Ղուկասյանը ընտրվել է Գյումրի համայնքի ղեկավար:

3.2 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների համաձայն՝ 1988 թվականի մարտի 1-ին կատարվել է Վարդան Ղուկասյանի դստեր՝ Աննա Վարդանի Ղուկասյանի ծննդի պետական գրանցումը:

3.3 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների համաձայն՝ 2013 թվականի ապրիլի 21-ին կատարվել է Աննա Վարդանի Ղուկասյանի և Ավետիս Գուրգենի Առաքելյանի ամուսանության պետական գրանցումը, 2021 թվականի հուլիսի 21-ին՝ ամուսնալուծության պետական գրանցումը, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 10-ին՝ վերջիններիս ամուսնության պետական գրանցումը:

3.4 2025 թվականի մայիսի 2-ին տեղի ունեցած՝ Գյումրի համայնքի ավագանու նիստի ժամանակ Վարդան Ղուկասյանը Ավետիս Առաքելյանին ներկայացրել է որպես Գյումրիի համայնքապետի առաջին տեղակալի թեկնածու: Նույն օրը Գյումրի համայնքի ավագանու նիստի ժամանակ Ավետիս Առաքելյանը ընտրվել է Գյումրիի համայնքապետի առաջին տեղակալ:

3.5 Ավագանու նիստի ժամանակ Վարդան Ղուկասյանը Ավետիս Առաքելյանի ընտրությունից հետո ասել է «Կապ չունի, որ Առաքելյան Ավետիսը իմ փեսան է, ես շատ պատասխանատու եմ ու շատ եմ պահանջելու իրենից, ավելի շատ քան որևիցե այլ մեկից:»:

4. ***Այլ սահմանափակումների վերաբերյալ ներպետական օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր***

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար:

4.2 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքային քաղաքական պաշտոններն են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:

4.3 Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախարարի տեղակալի քաղաքական պաշտոն և համայնքի ղեկավարի տեղակալի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը գործում է համապատասխանաբար նախարարից և համայնքի ղեկավարից պատվիրակված լիազորությունների ուժով, բացառությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարի՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալների, որոնք գործում են նաև օրենքով սահմանված լիազորությունների հիման վրա, և սեփական պատասխանատվությամբ քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված չէ:

4.4 Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին արգելվում է համատեղ աշխատել իր հետ **մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:**

4.5 Միաժամանակ, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից սույն հոդվածով նախատեսված սահմանափակումը խախտելու մասին Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովի եզրակացությունը եռօրյա ժամկետում հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 4-րդ մասը կիրառելի է վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

4.6 Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը:

4.7 «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է: Համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս երկու տեղակալ:

Նույն օրենքի 2-րդ մասը սահմանում է, որ համայնքի ղեկավարի առաջին տեղակալը փոխարինում է համապատասխան համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածությունը ավագանու կողմից երկու անգամ չհաստատվելու դեպքում վերջինս նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքապետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթներ: **Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ**

համայնքի ղեկավարի տեղակալները կարող են իրականացնել նաև այլ գործառույթներ:

4.8 Նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր գործունեությունը կազմակերպում է իր տեղակալի (տեղակալների), համայնքի ղեկավարի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, աշխատակազմի միջոցով:

4.9 ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի» կանոնադրության 19-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարի տեղակալը՝

1. համակարգում է համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների, համայնքային կազմակերպությունների աշխատանքը՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում,

(...),

3. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և(կամ) իր նախաձեռնությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ,

(...),

6. իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները,

7. պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին,

8. ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին,

(...),

10. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է (...), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, (...) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը:

4.11 Նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝

(...)

2. **լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.**

(...) :

5. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Հանձնաժողովը, իրականացնելով վարույթում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմի վերլուծություն, արձանագրում է հետևյալը.

«Նեպոտիզմի դեմ պայքարը տեղական և տարածքային իշխանությունների մակարդակում» վերտառությամբ հուշագրում (ԵԽ 2019) Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսն առաջ է քաշում դիրքորոշում առ այն, որ նեպոտիզմը և ֆավորիտիզմը տեղական և տարածքային մակարդակներում կարող են խոչընդոտել տեղական հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը, նվազեցնել հանրային վստահությունը և վնասել ընկալումն առ այն, որ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները ծառայում են իրենց բնակիչների շահերին:

Իր բանաձևում Կոնգրեսը տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններին առաջարկում է՝ անձանց նշանակման և առաջխաղացման գործընթացներում բարձրացնել թափանցիկությունը՝ հասկացելով

հստակ ընթացակարգեր, երաշխավորելով հավասարություն և արդարություն, ինչպես նաև ներդնելով հաշվետվողականության մեխանիզմներ՝ հնարավոր կողմնակալության կամ շահերի բախման դեպքերը բացահայտելու համար:

Կոնգրեսը նշում է, որ Ֆավորիտիզմի պրակտիկան իր տարբեր դրսևորումներով ներկայացնում է շահերի բախման իրավիճակներ, որոնցում պաշտոնատար անձի անձնական շահերը գերակայում են հանրային շահերի նկատմամբ: Նման իրավիճակները ստեղծում են անհավասարություն և վտանգում են հանրային ծառայությունների մատուցման անաչառությունն ու որակը: Հաշվի առնելով նման վտանգները՝ Վարքագծի օրինակելի կանոնագիրքը (Model Code of Conduct) պարունակում է շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ուղղված հատուկ դրույթներ:

Մասնավորապես, Վարքագծի օրինակելի կանոնագրքով սահմանվում է, որ յուրաքանչյուր հանրային պաշտոնյայի անձնական պարտականությունն է խուսափել շահերի բախման հնարավոր, ենթադրյալ կամ իրական իրավիճակից: Եթե նման իրավիճակն անխուսափելի է, պաշտոնյան պարտավոր է բացահայտել շահերի բախման առկայությունը և զերծ մնալ այնպիսի որոշումների կայացումից, որոնք կարող են հանգեցնել շահերի բախման (հոդվածներ 13-14): Շահերի բախման հնարավոր, ենթադրյալ կամ իրական դեպքի չբացահայտումը պետք է հանգեցնի համապատասխան և արդյունավետ կարգապահական միջոցների կիրառման:

Միաժամանակ, **այս դրույթների գործնական կիրառումը, մասնավորապես նշանակման գործընթացներում, ենթադրում է, որ.**

► հանրային պաշտոնյաները չպետք է ներգրավված լինեն նշանակման կամ ընտրության որևէ գործընթացում, որը կարող է կասկածի տակ դնել նրանց անաչառությունը,

► **ընտանիքի անդամները չպետք է գտնվեն այնպիսի իրավիճակում, երբ նրանցից մեկը ստանձնի մյուսի նկատմամբ ուղղակի վերադասություն,**

► հանրային պաշտոն զբաղեցնելու թեկնածուի շահերի բախման որևէ դեպք պետք է լուծվի մինչև նշանակումը:

Տեղական և տարածաշրջանային իշխանությունները, որոնք ցանկանում են հետևողականորեն հակազդել ֆավորիտիզմին, իրենց կողմից նշանակման կամ մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացներում, պետք է ձգտեն մշակել համակարգային մոտեցում, որը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- հնարավոր ռիսկերի նույնականացում,
- ամուր կանխարգելիչ մեխանիզմների ստեղծում,
- քաղաքականության պահանջների ապահովում,
- հաշվետվողականություն և խախտումների պատժում:

Նման մոտեցումը կարող է ներառել **այնպիսի քաղաքականության հաստատում, որը երաշխավորում է, որ նշանակման գործընթացներում շահերի բախման իրական, ենթադրյալ կամ հնարավոր դեպքերը կկանխվեն: Նման քաղաքականությունը պետք է ապահովի, որ որևէ հանրային պաշտոնյա չներգրավվի այն թեկնածուի ընտրության կամ նշանակման գործընթացում, որի հետ նա կարող է ունենալ ցանկացած բնույթի հարաբերություն, որը կարող է հանգեցնել շահերի բախման:**

Հաջորդիվ Կոնգրեսն իր՝ «Նեպոտիզմի դեմ պայքարը տեղական և տարածաշրջանային իշխանությունների մակարդակում» վերտառությամբ թիվ 441 (2019) բանաձևում կոչ է անում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմիններին **ապահովել այնպիսի կարգավորումների կիրարկումը, որոնք արգելում են հանրային պաշտոնյաներին ներգրավվել որևէ նշանակման կամ ընտրության գործընթացում, որը կարող է կասկածի տակ դնել նրանց անաչառությունը:**

Սույն վարույթով պարզվել է, որ 2025 թվականի մայիսի 2-ին տեղի ունեցած՝ Գյումրի համայնքի ավագանու նիստի ժամանակ Գյումրի համայնքի ավագանին, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի ներկայացմամբ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 1-ին

և 3-րդ մասերով՝ որոշել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակել Ավետիս Առաքելյանին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին արգելվում է՝ համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձի հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

Հաշվի առնելով Օրենքի վերը նշված կարգավորումը՝ Ավետիս Առաքելյանի կողմից այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացություն տալու համար անհրաժեշտ է պարզել.

1. արդյո՞ք Ավետիս Առաքելյանը և Վարդան Ղուկասյանը համարվում են մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք, թե՝ ոչ,

2. արդյո՞ք նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ, թե՝ ոչ:

Մերձավոր ազգակցություն և խնամիություն հասկացությունների բնորոշումը տրված է Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, **ամուսնու ծնողը,** զավակը, եղբայրը և քույրը:

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների համաձայն՝ Աննա Վարդանի Ղուկասյանը հանդիսանում է Վարդան Ղուկասյանի դուստրը:

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների համաձայն՝ 2013 թվականի ապրիլի 21-ին կատարվել է Աննա Վարդանի Ղուկասյանի և Ավետիս Գուրգենի Առաքելյանի ամուսանության պետական գրանցումը, 2021 թվականի հուլիսի 21-ին՝ ամուսնալուծության պետական գրանցումը, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 10-ին՝ վերջիններիս ամուսնության պետական գրանցումը:

Նշվածից հետևում է, որ Վարդան Ղուկասյանը հանդիսանում է Ավետիս Առաքելյանի կնոջ՝ Աննա Վարդանի Ղուկասյանի հայրը, հետևաբար Ավետիս

Առաքելյանը և Վարդան Ղուկասյանը համարվում են խնամիությամբ կապված անձինք և չեն կարող պաշտոնավարել անմիջական ենթակայության-վերադասության պայմաններում:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարի տեղակալի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը գործում է համայնքի ղեկավարից պատվիրակված լիազորությունների ուժով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքապետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթներ: Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ համայնքի ղեկավարի տեղակալները կարող են իրականացնել նաև այլ գործառույթներ:

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համայնքի ղեկավարի տեղակալը՝

1. համակարգում է համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների, համայնքային կազմակերպությունների աշխատանքը՝ **համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում**,

2. **համայնքի ղեկավարի հանձնարարությամբ** և(կամ) իր նախաձեռնությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ,

3. **իրեն հանձնարարված բնագավառներում** համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները,

4. **պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին**,

5. ապահովում է **իրեն հանձնարարված բնագավառներում** ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին,

6. **համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:**

Վերոգրյալից պարզ է դառնում, որ համայնքի ղեկավարի և նրա առաջին տեղակալի միջև առկա են անմիջական վերադասության-ենթակայության հարաբերություններ՝ հիմք ընդունելով այն հանգամանքները, որ համայնքի ղեկավարն իր տեղակալներին, այդ թվում՝ առաջին տեղակալին, տալիս է անմիջական կատարման հանձնարարություններ, իսկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալն իր հերթին հանձնարարականների կատարման մասին հաշվետու է համայնքի ղեկավարին:

Ընդ որում համայնքի ղեկավարի և նրա առաջին տեղակալի միջև վերադասության-ենթակայության հարաբերությունների առկայության մասին կարող է վկայել նաև այն, որ ավագանու նիստի ժամանակ Վարդան Ղուկասյանն Ավետիս Առաքելյանի ընտրությունից հետո ասել է «Կապ չունի, որ Առաքելյան Ավետիսը իմ փեսան է, ես շատ պատասխանատու եմ ու շատ եմ պահանջելու իրենից, ավելի շատ քան որևիցե այլ մեկից:»:

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումների և սույն գործի շրջանակներում առկա տեղեկատվության վերլուծության արդյունքում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ավետիս Առաքելյանը, իր հետ խնամիությամբ կապված անձի՝ կնոջ ծնողի հետ անմիջական վերադասության-ենթակայության հարաբերություններով աշխատելով, թույլ է տվել Օրենքով 32-րդ հոդվածով սահմանված այլ սահմանափակման խախտում:

Ա.Առաքելյանի ներկայացուցիչը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ Ավետիս Առաքելյանն ի սկզբանե Կոմունիստական կուսակցության կողմից ներկայացվել է որպես քաղաքապետի առաջին տեղակալի թեկնածու՝ կուսակցության կողմից իրեն ներառելով ընտրացուցակի երկրորդ հորիզոնականում և ի սկզբանե՝ դեռևս 2025 թվականի մարտի 1-ին ներկայացված փաստաթղթերով, և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2025 թվականի մարտի 10-ի գրանցման հաստատմամբ Ավետիս Առաքելյանը հանդես է եկել և մասնակցել է ընտրություններին որպես Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու: Բացի այդ նշել է, որ համայնքի ավագանու կողմից Ավետիս Առաքելյանին համայնքի ղեկավարի առաջին տեղակալի ներկայացուցչական-քաղաքական բնույթի պաշտոնում առաջնային մանդատ ունեցող

և քաղաքական մարմին հանդիսացող ավագանու կողմից նշանակելը չի եղել ուղղակիորեն օրենսդրորեն արգելված: Եթե լիներ այդպիսին, Ավետիս Առաքելյանի թեկնածությունը չէր կարող հաստատվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ընտրացուցակով որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու: Հանձնաժողովը Վ.Ղուկասյանի ներկայացուցչի նշված դիրքորոշումների կապակցությամբ արձանագրում է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 130-րդ հոդվածը սահմանում է համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու կարգը: Միաժամանակ, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Կուսակցության կանոնադրությամբ սահմանվում է նաև Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների ձևավորման կարգը: Ընտրական ցուցակների ձևավորման կարգը պետք է արտացոլի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջները: Ընտրական ցուցակների ձևավորման ժամանակ առնվազն հաշվի են առնվում կուսակցությունների անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները:»:

Հայաստանի Կոմունիստական կուսակցության կանոնադրությունը որևէ վերաբերելի դրույթ չի սահմանում նախընտրական ցուցակների ձևավորման առանձնահատկությունների մասին:

Վերը նշվածի համատեքստում Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ համամասնական ընտրակարգով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ դրույթ առ այն, որ կուսակցությունն իրավասու է առաջադրելու համայնքի ղեկավարի կամ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածու, հետևաբար նաև, որ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում պետք է պարտադիր նշանակվի

ընտրական ցուցակի երկրորդ համարը: Վերոնշյալ նորմերի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ կուսակցությունն իրավասու է ընտրական ցուցակով առաջադրել բացառապես համայնքի ավագանու անդամների թեկնածուների: Ավելին, տվյալ հարցը քննարկման առարկա դարձնելն ինքնին պարունակում է հովանավորչության ռիսկեր, քանի որ տվյալ նորմի սահմանված լինելու պարագայում ակնհայտ է, որ ընտրական ցուցակի կազմման վրա ազդեցություն ունեցող կուսակցության նախագահը շահագրգռված կլիներ իր հետ փոխկապակցված անձանց ներառելու ցուցակի առաջին հորիզոնականներում: Հետևաբար, Ներկայացուցչի պնդումներն առ այն, որ Ավետիս Առաքելյանն ի սկզբանե Կոմունիստական կուսակցության կողմից ներկայացվել է որպես քաղաքապետի առաջին տեղակալի թեկնածու՝ կուսակցության կողմից իրեն ներառելով ընտրացուցակի երկրորդ հորիզոնականում, իրավական առումով իմաստազուրկ են և չունեն որևէ օրենսդրական հենք:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ավագանու յուրաքանչյուր անդամ, այդ թվում՝ Կոմունիստական կուսակցության խմբակցության յուրաքանչյուր անդամ, ավագանու կողմից կարող էր նշանակվել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ:

Հաջորդիվ, պետք է նաև արձանագրել, որ ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգի դեպքում համայնքի ղեկավարի ընտրության գործընթացն անուղղակի ընտրության սկզբունքի վրա է կառուցված. այսինքն՝ համայնքի բնակիչները քվեարկում են ոչ թե համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալների թեկնածուների օգտին, այլ ընտրում են ավագանու անդամներին, որոնք հետագայում ձևավորում են համայնքի գործադիր իշխանություն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձին և հաստատում նրա ներկայացրած տեղակալներին: Այսպիսով, ընտրական ցուցակի հերթականությունը որևէ իրավական կապ չունի այն պաշտոնների հետ, որոնք կարող են զբաղեցնել տվյալ ցուցակի անդամները ավագանու ձևավորումից հետո: Ավելին, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակումը ավագանու հաստատմամբ իրականացվող գործընթաց է, որը փաստացի իրականացվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և ավագանու

քաղաքական համաձայնությամբ: Հետևաբար, ընտրական ցուցակի երկրորդ համարն զբաղեցնելն ինքնին չի նշանակում լինել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, քանի որ նման օրենսդրական պարտադիր պահանջ առկա չէ և նման մեկնաբանությունը չի բխում որևէ իրավական նորմից:

Բացի այդ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքի և Հանձնաժողովի՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրի ուսումնասիրությունը ևս փաստում է, որ մի շարք համայնքներում համայնքի ղեկավարի առաջին տեղակալներ նշանակվել են ոչ թե տվյալ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի երկրորդ համարները զբաղեցնող անձինք, այլ՝ այլ անձինք: Որպես օրինակ նշենք, որ Սիսիան համայնքում համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակվել է ընտրական ցուցակի 26-րդ համարը զբաղեցնող անձը, Չարենցավան համայնքում՝ 19-րդ համարը զբաղեցնող անձը, Ծաղկահովիտ համայնքում՝ 4-րդ համարը զբաղեցնող անձը և այլն:

Ա.Առաքելյանի ներկայացուցիչն իր վերը նշված դիրքորոշումը հիմնավորում է «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորմամբ, որը, սակայն, վերաբերում է համայնքի ղեկավարի ընտրության անցկացմանը և համայնքի ղեկավարի թեկնածություն առաջադրելուն, այլ ոչ թե համայնքի ղեկավարի առաջին տեղակալի թեկնածություն առաջադրելուն, այն էլ այն դեպքում, երբ համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, մինչդեռ Գյումրի համայնքի ավագանու ընտրություններում որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին չի ստացել:

Ինչ վերաբերում է Ա.Առաքելյանի ներկայացուցչի այն դիրքորոշմանը, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով հանրային ծառայողների նկատմամբ նախատեսվող սահմանափակումները կարող են կիրառելի չլինել քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ՝ պայմանավորված այդ պաշտոնատար անձանց ընտրության առանձնահատկություններով, ապա

Հանձնաժողովն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը 23-րդ հոդվաի 1-ին մասի 1-ին կետում ուղիղ նշված է, որ Հանձնաժողովի գործառույթն է հետևել պետական պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների,** Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը, ինչից հետևում է, որ Օրենքով սահմանված սահմանափակումները տարածվում են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց վրա և Հանձնաժողովը պարտավոր է հետևել վերջիններիս, այդ թվում համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների կողմից **Օրենքով սահմանված** անհամատեղելիության պահանջների և **այլ սահմանափակումների պահպանմանը**: Ընդ որում, Օրենքով նախատեսված դրույթն, առ այն, որ նշված հոդվածով նախատեսված այլ սահմանափակումների վերաբերյալ պահանջների խախտումը քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելի չէ, որևէ կերպ չի կարող մեկնաբանվել այնպես, որ այլ սահմանափակումների պահանջները վերջիններիս նկատմամբ չեն տարածվում կամ կարող են չտարածվել կամ մասնակի տարածվել: Ընդհակառակը, հենց վերը նշված առանձնահատկությունների հաշվառմամբ է, որ օրենսդիրը բարեվարքության համակարգի գրեթե բոլոր տարրերի խախտման համար քաղաքական պաշտոնների դեպքում նախատեսել է հանրային և ոչ թե կարգապահական պատասխանատվություն՝ հատուկ շեշտադրելով վերջիններիս դեպքում հրապարակայնության և հաշվետվողականության պահպանման կարևորությունը:

Ընդ որում, Ներկայացուցչի փաստարկն առ այն, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված սահմանափակումների հնարավոր խախտումները պետք է անհատականացված ուսումնասիրության ենթարկվեն՝ պարզելու համար, թե արդյո՞ք դրանք արդյունք են եղել որոշակի անձի կամ անձանց մասնավոր լիազորությունների չարաշահման, ուղղված են եղել որոշակի արտոնություններ ձեռքբերելուն կամ այլ չարամիտ նպատակ են հետապնդել, և ի՞նչ

իրավական հետևանքներ են առաջացրել, Հանձնաժողովի գնահատմամբ անհիմն է՝ նկատի ունենալով, որ թվարկված հարցադրումներով ներկայացված արարքները պարունակում են հանցակազմի տարրեր (մասնավորապես, Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով նախատեսված արարք): Հետևաբար, այլ սահմանափակումների խախտումները Հանձնաժողովը դիտարկում է դրանց նպատակային նշանակությամբ, մինչդեռ սույն դեպքում նորմի նպատակային նշանակությունը եղել է հովանավորչության ցանկացած դրսևորման, շահերի հնարավոր բախման և դրանց հետևանքով հանրային վստահության նվազման կանխարգելման համատեքստում:

Անդրադառնալով Ա.Առաքելյանի ներկայացուցչի մյուս փաստարկին, համաձայն որի՝ որպես համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակվելով՝ Ավետիս Առաքելյանը չի ստացել որևէ արտոնություն, գույքային կամ այլ վիճակի բարելավում բովանդակային ցանկացած իմաստով, Հանձնաժողովը նշում է, որ այն նույնպես անհիմն է, քանի որ Ա.Առաքելյանի՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի, այլ կերպ ասած՝ համայնքի կառավարման տեսանկյունից երկրորդ կարևորագույն պաշտոնում նշանակվելը, ինքնին հանգեցրել է վերջինիս իրավիճակի բարելավմանը ՝ միաժամանակ նրա համար ապահովել է գույքային դրության բարելավում՝ հաշվի առնելով այն, որ ի տարբերություն ավագանու անդամների համայնքի ղեկավարի առաջին տեղակալը ստանում է աշխատավարձ:Բացի այդ, Հանձնաժողովն արձանագրում է, որ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնը ոչ միայն վարձատրվող է, այլև ենթադրում է կառավարման լիազորություններ և նշանակալի ազդեցություն համայնքային քաղաքականության ձևավորման վրա: Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ պաշտոնին որևէ ավագանու անդամի նշանակում իր էությամբ հանդիսանում է իշխանական և կազմակերպչական արտոնություն, քանի որ ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների իրականացման, համայնքային ենթակառուցվածքների և ֆինանսական հոսքերի կառավարման գործընթացներում առանցքային դերակատարում: Ավելին, Ավետիս Առաքելյանի՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակվելը ոչ միայն վերջինիս համար է հանգեցրել արտոնության, այլև ուղղակիորեն բխել է Վարդան Ղուկասյանի մասնավոր շահից:

Այսպես, 2025 թվականի մարտի 31-ի հրապարակային մամուլի ասուլիսի ընթացքում Գյումրիի համայնքի ղեկավարի թեկնածու Վարդան Ղուկասյանի պնդումը, առ այն, որ եթե իրեն ձերբակալեն, փոխքաղաքապետը կդառնա քաղաքապետ, ինքը վախենալու բան չունի, բայց եթե քայլեր ձեռնարկվեն այդ ուղղությամբ, փոխքաղաքապետն ունի կարևոր առաքելություն, ուղղակիորեն վկայում է, որ իր հետ փոխկապակցված անձին տվյալ պաշտոնի նշանակումն ունեցել է հատուկ նպատակային նշանակություն: Այսպես, եթե այլ պարագայում նմանօրինակ պնդումը գուցե և հիմնավորված լիներ, և խնդրահարույց չլիներ, քանի որ տրամաբանական է, որ համայնքի ղեկավարի բացակայության դեպքում առաջին տեղակալի պաշտոնում վստահելի անձի նշանակված լինելը հատուկ կարևորվում է, խնդրո առարկա դեպքում այն է հատուկ խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ որպես առաջին տեղակալի թեկնածու Վարդան Ղուկասյանը ներկայացրել է իր փեսային, իսկ մյուս տեղակալի պաշտոնում նշանակվելու համար՝ իր ընկերոջը: Նշվածը թույլ է տալիս արձանագրել, որ Վարդան Ղուկասյանը տվյալ առաջադրումներով նպատակ է ունեցել իր բացակայության պարագայում փաստացի պահպանել իշխանությունը և ազդեցությունը համայնքի կառավարման վրա, իսկ Ավետիս Առաքելյանն աջակցել է նշված նպատակի գործնականում իրականացմանը:

Ա.Առաքելյանի ներկայացուցչի կողմից ներկայացված այն փաստարկի կապակցությամբ, համաձայն որի՝ Հանձնաժողովի կողմից լրատվամիջոցի հրապարակման կապակցությամբ վարույթի հարուցման հարցի լուծումը տևել է ավելի քան երկու ամիս, ինչը չի տեղավորվում վարչարարության իրականացման վաղեմության ժամկետների ընդհանուր տրամաբանության մեջ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ինչպես և ներկայացուցիչն իրավացիորեն նկատել է, լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված համապատասխան վարույթների, այդ թվում՝ այլ սահմանափակումների դեպքերով վարույթների, հարուցման համար **որևէ ժամկետ նախատեսված չէ**, հետևաբար վաղեմության ժամկետներն անցնելու հարց տվյալ պարագայում չի կարող քննարկվել: Ավելին, լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա վարույթ հարուցելու

Հանձնաժողովի իրավասությունը ժամկետով չսահմանափակելն ինքնանպատակ չէ և ուղղակիորեն բխում է Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատից: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամկետային սահմանափակումը բացակայում է այն վարույթների հարուցման դեպքում, որոնք վերաբերում են բարեվարքության համակարգի տարրերին (վարքագծի կանոններ, շահերի բախում, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, նվերներ ընդունելու սահմանափակումներ)՝ ակնհայտ է, որ Օրենսդիրը նպատակ է ունեցել հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի վրա Հանձնաժողովի ուշադրությունը սևեռելու համար Հանձնաժողովին չկաշկանդել վարույթի հարուցման ժամկետներով: Ավելին, հաշվի առնելով հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի ամրապնդման կարևորությունը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի և հանրային վստահության ուղիղ համեմատական լինելը՝ բարձրացվող հարցի իրավական արժեքը չի կարող կորչել առնվազն անձի պաշտոնավարման ժամանակահատվածում: Ընդ որում՝ Ներկայացուցչի կողմից առաջ քաշված՝ վարույթի հարուցման հարցի լուծման ժամկետների հիմնավորվածության առնչությամբ հարկ է նկատել, որ Հանձնաժողովն իր կողմից իրականացվող մեդիա մշտադիտարկման արդյունքում վեր հանված՝ Հանձնաժողովի մանդատին վերաբերելի հրապարակումները ենթարկում է համալիր ուսումնասիրության, որն իրականացվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումներում՝ ըստ աշխատակարգերի, և ուսումնասիրությունների ժամկետները ողջամտորեն տարբեր են՝ կախված վարույթի հարուցման հիմքերի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման և վերլուծության հետ: Ավելին՝ Հանձնաժողովի կոլեգիալ բնույթը նկատի ունենալով, վարույթի հարուցման հիմքերի՝ Հանձնաժողովի կողմից քննարկումը ևս ճկուն է և չի սահմանափակվում որևէ ստույգ ժամկետով, ինչն ուղղակիորեն բխում է օրենքի տրամաբանությունից: Հանձնաժողովը միաժամանակ արձանագրում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված համապատասխան վարույթները վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ չեն, հետևաբար նրանց վրա չեն տարածվում և չեն կարող

տարածվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի կարգավորումները:

Ամփոփելով վերոգրյալը, սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը եզրահանգում է, որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում Ավետիս Առաքելյանն իր գործողություններով չի պահպանել Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 33-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է

ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Ավետիս Առաքելյանի կողմից այլ սահմանափակումների խախտման առկայության մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ